

«Ծագումը» և «Որդեգրի մի գյուղ» նախագծերը



Սիրելի հայրենակիցներ, ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հայ ազգի մեծ բարեկամ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի քաղաքացի Լեն Ուիքսի «Ծագումը» և «Որդեգրի մի գյուղ» նախագծերը:

«Ծագումը» նախագծի խորհրդանիշն է նուրը, որը «Ծագումը: Բացահայտում» և «Ծագումը: Մարդկության ողիսական» վեպերի միջոցով ներկայացնում է կապը մեր անցյալի հետ: «Ծագումը: Բացահայտում»-ն այլընտրանքային էպիկ պատմություն է մշակույթի, սիրո և մեր, որպես մարդկային էությունների, բացահայտման մասին՝ ծավալված համաշխարհային պատմության մեծագույն հակամարտությունների ժամանակաշրջանում: «Ծագումը» նախագիծը ինքնատիպ գովազդ է հանդիսանում Հայաստանի համար: Այն բացում է աշխարհի աչքերը դեպի Հայաստանի գեղեցկությունը, նրա հնագույն մշակույթը, ինչպես նաև դեպի պատմության դառը էջերը, ինչպես հայոց ցեղասպանությունը:

«Որդեգրի մի գյուղ» նախագծի խորհրդանիշն է ծիրանը, այն իրենից ներկայացնում է կապը Հայաստանի գյուղական վայրերի և սփյուռքի կողմից գլխավորած նախաձեռնող միջոցառումների միջև: Այն անմիջականորեն կապում է զգալի սփյուռքահայություն ունեցող երկրները ընտրված գյուղի և նրա շրջակայքի հետ: Սա իրականացվում է ֆինանսավորման, տեխնիկական փորձաքննության և այլ միջոցառումների միջոցով, որոնք թույլ են տալիս գյուղին էապես շահել նվիրատվություններից: Գյուղական նախագծերի առաջընթացը կարող է հետևել Սփյուռքի նախարարության կողմից, սակայն դրանից զատ կենտրոնական իշխանությունները չեն ունենա այլ ակտիվ ամենօրյա դեր:

Այս նախագծերը մեծ կարևորություն ունեն Հայաստանի համար, և հատկապես, Վայոց Ձոր մարզի համար երեք ոլորտներում՝

1. Զբոսաշրջության և գործարար հնարավորությունների անխուսափելի աճ, քանզի մարդիկ ամբողջ աշխարհում կճանաչեն տարածաշրջանի եզակի հատկություններով վայրերը, ներառյալ՝ Արենին, Նորավանքը, Քարավանատունը, Մրբատաբերդը և Զերմուկը:

2. Յուրահատուկ գրավիչ ֆոլկ գյուղի ստեղծում, որը կարող է լինել հին Արենիի վերաստեղծումը՝ լրացված ավանդական հագուստներ կրող գյուղացիներով, ովքեր կցուցադրեն Հայաստանի զարմանահրաշք երաժշտությունը, պարը, փառատոները, խոհանոցը և բանահյուսությունը - սա կարող է լինել «Ծագման» եռերգության նկարահանումների համար ստեղծված հիմնական կայքը, որը ֆիմլի նկարահանումներից հետո կմնա մշտական թանգարան բաց երկնքի տակ, և
3. «Որդեգրիր մի գյուղ» նախագծի փորձարկումը Վայոց Ձորի ընտրված գյուղերում:

Եկեք միասնական ուժերով օգնենք Լեն Ուիքիսն օգնել Հայաստանին: Շատ բաներ կան, որ Վայոց ձորի մարզը կարող է անել աջակցելու նախագծերին, որպեսզի բերվի այնքան անհրաժեշտ ներդրումը, զբոսաշրջության և գործարար հնարավորությունները: Վայոց Ձոր մարզի յուրաքանչյուր բնակիչ կարող է ակտիվ ջանք կիրառել տարածելու նախագծերի մասին խոսքը լրատվամիջոցների, սոցիալական ցանցի միջոցով (ինչպես, օրինակ, հետևել մեզ Twitter-ում՝ [@OriginsD](#) և Facebook-ում՝ <https://www.facebook.com/originsdiscovery>, կիսվել նյութերով), ինչպես նաև կարդալ վեպը և կարծիքը տեղադրել գրքի ֆեյսբուքյան էջում:

Քանի որ «Ծագումը: Բացահայտում»-ի հայերեն տարբերակը նվիրվել է հայ ժողովրդին անվճար և հաստատվել է Երևանի պետական համալսարանի կողմից, տարածաշրջանի գրադարանները և ավագ դպրոցները կարող են հետաքրքրություն հանդես բերել աշխատանքի նկատմամբ և տեղադրել այն իրենց բազայում (հայերեն տարբերակը կարող էք ներբեռնել այստեղ՝ <http://originsdiscovery.com/index%20Armenian.html>).

Եթե պարզաբանման կարիք կլինի, հարցեր կամ նույնիսկ առաջարկություններ, ապա կարող եք դիմել հեղինակին ֆեյսբուքյան էջի կամ թվիթթերի միջոցով, կամ դիմել մարզպետարան այլ կոնտակտային տվյալների համար:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել՝ <http://originsdiscovery.com>.

Կանխավ շնորհակալություն աջակցության համար: